

ՕԳՏԱՏԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՌՑԱՆՑ ԼՐԱՏՎԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀՀ-ՈՒՄ

Արփինե Հովհաննիսյան

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը, սոցիալական և այլընտրանքային մեդիայի ոլորտների ընդլայնումը առաջ են քաշում մի շարք հարցեր և խնդիրներ, որոնք հրատապ լուծման կարիք ունեն: Ներկայումս առավել արդիական հարցերից է էլեկտրոնային կայքերում նյութերի մեկնաբանությունների համար պատասխանատվության հարցը:

Հարկ է նշել, որ այս հարցի կապակցությամբ Հայաստանի Հանրապետությունը, ի տարբերություն բազմաթիվ այլ երկրների, աչքի չի ընկնում ո՛չ օրենսդրական նորմերի, ո՛չ էլ դատական պրակտիկայի առկայությամբ:

Ընդամենը մեկ անգամ 2012 թվականին Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը քննել է գործ՝ քաղաքացի Արթուր Գրիգորյանն ընդդեմ «Հրապարակ» օրաթերթի¹, որտեղ անդրադարձել է մի շարք սկզբունքային հարցերի: Գործի դատավարական նախապատմությունը հետևյալն է. որ «Հրապարակ» օրաթերթի էլեկտրոնային կայքում (վեբ կայքում) տեղ էին գտել վիրավորական մեկնաբանություններ հայցվորի հասցեին: Այս կապակցությամբ վերջինս գտել էր, որ վերը նշված մեկնաբանություններում առկա են իր պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը արատավորող տեղեկություններ՝ վիրավորանք և զրպարտություն, դրանց հեղինակները անհայտ են, իսկ նշված տեղեկությունները տարածվել են լրատվական գործունեություն իրականացնող կազմակերպության՝ պատասխանողի կողմից՝ թույլ տալով նման տեղեկությունների առկայությունը իր սեփականությունը հանդիսացող և իր կողմից կառավարվող վեբ կայքում, հետևաբար, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածի, վիրավորանքի և զրպարտության համար պատասխանատվություն է կրում պատասխանողը՝ որպես լրատվական գործունեություն իրականացնող: Բացի այդ, հայցվորը շեշտը դրել էր այն փաստի վրա, որ պատասխանողն այդ մեկնաբանությունները հեռացնելու որևէ գործողություն չի ձեռնարկել, ինչը իր հերթին վկայում է նրա կողմից զրպարտելու և վիրավորելու դիտավորության մասին:

Դատարանը այս կապակցությամբ հարկ է համարել անդրադառնալ մի քանի հարցերի, մասնավորապես. «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 3-րդ մասի պահանջի վերլուծությունից հետևում է, որ զրպարտություն համարելու համար էական են ներքոհիշյալ էական նշանակություն ունեցող փաստերը գործով հաստատված լինելու հանգամանքը, այն էլ անհրաժեշտ է, որպեսզի այդ փաստերը գործով հաստատվեն միաժամանակ՝ ըստ համապատասխան հերթականության, մասնավորապես՝

¹ Տե՛ս http://datalex.am/dl_case_view_page.php?caseType=2&courtID=0&caseID=14355223812280869 (վերջին այցելություն 10.01.2015թ.):

- արդյո՞ք ներկայացված փաստացի տվյալները կրում են հրապարակային բնույթ,
- արդյո՞ք հրապարակային ներկայացված փաստացի տվյալները չեն համապատասխանում իրականությանը,
- արդյո՞ք հրապարակային ներկայացված փաստացի տվյալներն արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը,
- արդյո՞ք հայտնի են թվով վեց մեկնաբանություններ կատարած անծիմք,
- արդյո՞ք «Հրապարակ» օրաթերթ ՍՊ ընկերության կողմից դրսևորվել է դիտավորություն հայցվորի պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին վիրավորանք և զրպարտություն հասցնելու համար,
- արդյո՞ք վեճի առարկա թվով վեց մեկնաբանությունները դեռևս շարունակում են մնալ պատասխանողի ինտերնետային կայքէջում»¹:

Հարկ է նշել, որ գործի ելքի համար վճռորոշ նշանակություն են ունեցել հատկապես վերջին երեք հարցերի պատասխանները: Այս կապակցությամբ, մասնավորապես,

«Դատարանը, ելնելով սույն գործի փաստական հանգամանքների եզակիությունից, արձանագրում է հետևյալ սկզբունքը.

«Հրապարակ օրաթերթ» ՍՊ ընկերությունը, լինելով զանգվածային լրատվամիջոց, ունենալով առանձնահատուկ դեր ժողովրդավարական հասարակությունում հանրային հնչեղություն ունեցող լուրերի մասին տեղեկատվություն տրամադրելու հարցում և իրականացնելով նաև հանրային և մասնավոր մարմինների նկատմամբ «հսկողություն» իրականացնելու կարևոր դերը, լինելով խոսքի ազատության ջատագովներից և այն տարածողներից մեկը, չէր կարող նախքան Արթուր Գրիգորյանի գրավոր կամ բանավոր դիմելը սահմանափակել իր իսկ ընթերցողների ազատ արտահայտվելու իրավունքը (օրինակ՝ մեկնաբանությունները ջնջել, հեռացնել), քանի որ այն միանշանակ կերպով կդիտվեր ոչ անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում, ուստի և օրաթերթը չի կարող կրել պարտականություններ, այլ անձնանց կողմից թողնված մեկնաբանությունների համար, քանի որ, նախ՝ առկա չէ վերջինիս դիտավորությունը հայցվոր Արթուր Գրիգորյանին վիրավորանք կամ զրպարտություն հասցնելու մեջ, ներկա պահին թվով վեց մեկնաբանությունները հեռացված են կայքէջից, անծի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող տեղեկությունները տարածած անձանց պարզելն անհնար է, քանի որ վերջիններս հանդես են եկել իրենց ծածկանուններով և թողել են իրենց մեկնաբանությունները առկա հոդվածի վերաբերյալ»:

Ինչպես տեսնում ենք, դատարանը պատասխանողին պատասխանատվությունից ազատելու համար հաշվի է առել մի քանի հանգամանք՝

ա) հայցվորը նախքան դատարան դիմելը որևէ անգամ չի դիմել լրատվամիջոցին.

բ) լրատվամիջոցը տեղեկանալուց անմիջապես հետո հեռացրել է մեկնաբանությունները, ինչը նշանակում է՝ դիտավորություն չի ունեցել զրպարտելու.

գ) մեկնաբանություններ թողածների անձը անհնար է պարզել, և լրատվամիջոցը դրա համար չի կարող լինել պատասխանատու:

¹ Տե՛ս http://datalex.am/dl_case_view_page.php?caseType=2&courtID=0&caseID=14355223812280869 (վերջին այցելություն 10.01.2015թ.)

Այս հանգամանքներից յուրաքանչյուրը քննարկման առարկա կարող է դառնալ միջազգային պրակտիկայում տարածված մոտեցումների տեսանկյունից, սակայն թվում է՝ վերջին կետը՝ անհայտ աղբյուրի տարածած տեղեկատվության մասով դատարանը տվել է այնպիսի մեկնաբանություն, որը այդքան էլ չի համապատասխանում 1087.1 հոդվածի 9-րդ մասում սահմանված կանոնին¹:

Իսկ այժմ տեսնենք, թե ինչպիսի կարգավորումներ են առկա միջազգային պրակտիկայում վիրավորանք կամ զրպարտություն պարունակող մեկնաբանություններում:

Միջազգային պրակտիկայում ընդունված է առանձնացնել այսպես կոչված համացանցային միջնորդների² պատասխանատվության տարբեր մոդելներ.

1. Խիստ պատասխանատվության ռեժիմ, օրինակ՝ Չինաստանում, որտեղ միջնորդները պարտավոր են ակտիվորեն հսկել կոնտենտը և հեռացնել ցանկացած մեկնաբանություն, որը վիրավորական կամ զրպարտչական է:

2. Ապահով ապաստանի ռեժիմ, օրինակ՝ Եվրոպական Միությունում, Հարավային Աֆրիկայում և այլ, որտեղ միջնորդները արդյունավետորեն պաշտպանված են պատասխանատվությունից, եթե նրանք գործում են «notice-and-take down» («ծանուցել և հանել») ընթացակարգին համապատասխան:

3. Այլ անձանց կողմից ստեղծված նյութերի համար պատասխանատվությունից զրեթե ամբողջական պաշտպանվածություն, օրինակ՝ ԱՄՆ, Չիլի և այլն: Միջնորդը պատասխանատու չէ այլ անձանց կողմից ստեղծված նյութի համար այնքան ժամանակ, քանի դեռ չի միջամտում այդ նյութին: Միջնորդը պարտավոր է հեռացնել նյութը, եթե դա սահմանվում է դատարանի կամ այլ անկախ դատավարական մարմնի կողմից³:

4. Մոդել, որն առաջարկվում և պաշտպանվում է միջազգային հայտնի իրավապաշտպան **«Article 19»** կազմակերպության կողմից՝ «notice & notice» (ծանուցել և ծանուցել): Բանն այն է, որ այս կազմակերպությունը գտնում է. «Այն փաստը, որ միջնորդները տեխնիկական հնարավորություն ունեն կանխել նյութի հասանելիությունը, չի նշանակում, որ նրանք պետք է գնահատեն՝ նյութը օրինական է, թե ոչ: Նշված սահմանումը պետք է առաջնային հարց լինի անկախ դատական մարմնի, ոչ թե մասնավոր ընկերության համար»⁴: Միևնույն ժամանակ կազմակերպությունը, ինքն էլ ընդունելով, որ դատարան դիմելը կարող է ծախսատար և երկարաժամկետ գործընթաց լինել, առաջարկում է վերը նշված մոդելը:

Պետք է նշել, որ երկրների ճնշող մասում գործում է «notice-and-take down» («ծանուցել և հանել») մոդելը, որոշ տեղերում՝ նաև «notice & notice» (ծանուցել և ծանուցել) մոդելը:

¹ Այս մասին մանրամասն խոսվել է վերևում:

² Համացանցային միջնորդը լայն եզրույթ է, որը վերաբերում է այն անձանց, ովքեր հնարավորություն են տալիս միանալու համացանցին և փոխանցելու դրա բովանդակությունը: Կան միջնորդների բազմաթիվ տեսակներ՝ ներառյալ ինտերնետ պրովայդերները, հոստինգ պրովայդերները, սոցիալական մեդիայի հարթակները և որոնողական համակարգերը: Միջնորդները տարբերվում են «բովանդակություն արտադրողներ»-ից, այսինքն՝ այն անձանցից և կազմակերպություններից, որոնք պատասխանատու են տեղեկատվության ստեղծման և առցանց վերարտադրման համար:

³ Տե՛ս <http://www.article19.org/resources.php/resource/37243/en/internet-intermediaries:-dilemma-of-liability-q-and-a>(վերջին այցելություն 10.01.2015թ)

⁴ Տե՛ս նույն տեղում:

Առաջին մոդելի էությունը այն է, որ յուրաքանչյուր անձ կարող է դիմել միջնորդին (ծանուցել) և պահանջել հեռացնել նյութը: Միայն այն բանից հետո, երբ միջնորդը կիրառարկի կամ չի հեռացնի նյութը, անձը, ում վիրավորել կամ զրպարտել են, կարող է դիմել դատարան միջնորդի, այլ կերպ ասած՝ կայքի դեմ: Այսինքն՝ ինչպես վերևում նշվեց, դատարանը կայքի պատասխանատվության հարցը քննարկելիս մեծ նշանակություն է տվել այն բանին, թե արդյոք անձը դիմել է լրատվամիջոցին՝ խնդրելով հեռացնել մեկնաբանությունը:

Նմանատիպ մոդել գործում է նաև Մեծ Բրիտանիայում, որտեղ 2013 թվականին ընդունվեց Defamation Act¹, որտեղ մասնավորապես սահմանվում էր կայքի օպերատորի պատասխանատվությունը կայքում տեղադրված նյութերի համար: Պատասխանողը (կայքի օպերատորը) պարտվում է, եթե հայցվորը ցույց է տալիս, որ.

- ա) Հայցվորի համար անհնար է եղել նույնականացնել տվյալները տեղադրած անձին,
- բ) Հայցվորը օպերատորին ներկայացրել է տվյալների հետ կապված բողոքի ծանուցում,
- գ) Օպերատորը բողոքի ծանուցմանը չի պատասխանել սահմանված կարգին համապատասխան:

Ինչպես տեսնում ենք, պատասխանատվությունը վրա է հասնում մի քանի պայմանների առկայության դեպքում, որոնցից մեկը ծանուցելուց հետո պատասխան չտալն է:

Պատասխանատվության որոշ պայմաններ սահմանված են նաև «Հեռուստամեդիայի մասին» ԳԴՀ օրենքով՝ ընդունված 2007 թվականի փետրվարի 26-ին²: Մասնավորապես՝ ծառայություններ մատուցողը այլոց տեղեկությունների համար, որոնք փոխանցվել են հաղորդակցության ցանցին, կամ ինքը ապահովել է դրանց մուտքը, պատասխանատվություն չի կրում, եթե վերջինս

1. հաղորդված տեղեկատվության համար առիթ չի տվել,
2. հաղորդված տեղեկատվության հասցեատերերին չի ընտրել,
3. հաղորդված տեղեկատվությունը չի ընտրել կամ չի փոխել:

Այս հարցի կապակցությամբ առկա է նաև բավական հետաքրքիր դատական պրակտիկա: Օրինակ, 2011 թվականին Գերմանիայի դաշնային դատարանը սահմանել է. «Հաշվի առնելով շահերի բախման հնարավորությունը՝ ծառայություններ մատուցողի ծանրաբեռնվածության պայմաններում պատասխանատվության տեսանկյունից գործում են հետևյալ չափանիշերը.

Ծառայություններ մատուցողը պարտավոր չէ ստուգել օգտատերերի կողմից ցանցում տեղադրվող գրառումները մինչև դրանց՝ որպես հնարավոր իրավունքների խախտումների հրապարակումը: Սակայն նա դառնում է պատասխանատու, հենց որ տեղեկանում է իրավունքների խախտման մասին: Եթե շահագրգիռ անձը ծառայություններ մատուցողին զգուշացնում է բլոգի օգտատիրոջ կողմից իր անձնական իրավունքների խախտման մասին, ծառայություններ մատուցողը՝ որպես իրավունքների խախտող, կարող է պարտականություն ստանձնել՝ ապագայում նման խախտումները

¹ Տե՛ս <http://www.legislation.gov.uk/ukpga/2013/26/contents/enacted> (վերջին այցելություն 10.01.2015թ)

² Տե՛ս <http://www.gesetze-im-internet.de/tmg/> (վերջին այցելություն 10.01.2015թ)

թույլ չտալու կապակացությամբ»¹:

Ֆրանսիայի դատարանը «Google France v Louis Vuitton»² գործով պատասխանատվության հարցը քննարկելիս նշել է. «ԵՄ դիրեկտիվի³ հիման վրա պատասխանատվությունից ազատումը ենթադրում է մի շարք նախապայմաններ: Նախ որոշվում է այն հարցը, թե արդյոք կողմը՝ պատասխանողը, համապատասխանում է դիրեկտիվում նշված պահանջներին և կարող է համարվել միջանկյալ ծառայություններ մատուցող (service provider), թե ոչ»: Այս դատարանը, հղում կատարելով ԵՄ բանաձևի 14 հոդվածի 1-ին մասին, նշում է, որ երկրորդ նախապայմանը, որը նշված է ԵՄ բանաձևում, այն է, թե արդյոք ծառայություններ մատուցողը (service provider) տեղյակ է անօրինական գործունեության կամ տեղեկության մասին, իսկ վնասների հատուցման պահանջների կապակցությամբ արդյոք տեղյակ է այն փաստերի կամ հանգամանքների մասին, որոնց հիման վրա անօրինական գործողությունները կամ տեղեկատվությունը դառնում են ակնհայտ: Ըստ դատարանի՝ մյուս նախապայմանը, որ պետք է պահպանվի, այն է, թե արդյոք ծառայություններ մատուցողը նման տեղեկություն ստանալուց հետո անհապաղ միջոցներ է ձեռնարկում տեղեկատվության հեռացմանը կամ հասանելիության կասեցմանն ուղղված: Դատարանը, մեկնաբանելով ԵՄ բանաձևի 14-րդ հոդվածի 1-ին մասը, հղում է կատարել բանաձևի նախաբանի 42-րդ դրույթին՝ նշելով, որ պատասխանատվությունից ազատվում են միայն այն դեպքում, երբ ծառայություններ մատուցողի (service provider) գործունեությունը կրում է բացառապես տեխնիկական, ավտոմատ և պասիվ բնույթ, որը ենթադրում է, որ վերջինս չունի ո՛չ տեղեկություն, ո՛չ վերահսկողություն այն տեղեկության նկատմամբ, որը փոխանցվել կամ տեղադրվել է»:

Դատական պրակտիկայում քննարկվող հարցի առումով շրջադարձային եղավ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից 2013 թվականին քննված «Delfi AS vs Estonia» գործը⁴, որի շրջանակներում Եվրոպական դատարանը նշել է, որ դիմումատու ընկերությանը իր լրատվական կայքում տեղակայված նյութերի առնչությամբ ընթերցողների կողմից արված զրպարտչական մեկնաբանությունների համար քաղաքացիաիրավական պատասխանատվության ենթարկելը չի հակասում Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով պաշտպանվող խոսքի ազատության իրավունքին: Դատարանը սահմանել է. «Հաշվի առնելով 8-րդ հոդվածով սահմանված պետությունների պոզիտիվ պարտավորությունները, որոնք ընդգրկում են անհատների միջև շփման ոլորտում անձնական կյանքի նկատմամբ հարգանքի պապահովման չափանիշների սահմանումը՝ Դատարանը համոզված է, որ միայն զրպարտչական մեկնաբան-

¹ Տե՛ս <http://openjur.de/u/258408.html> (Urteil Az. VI ZR 93/10, BGH, 25.Oktober 2011) (վերջին այցելություն 10.01.2015թ.)

² (Joined Cases C-236/08 to C-238/08 Google France and Google [2010] ECR I-2417) the Court of Justice of the European Union

³ Տե՛ս http://www.wipo.int/wipolex/en/text.jsp?file_id=181678, «Ներքին շուկայում տեղեկատվական ծառայությունների որոշ իրավական հարցերի, մասնավորապես էլեկտրոնային առևտրի մասին» Եվրոպական խորհրդարանի և Եվրոպական միության խորհրդի 200/31/EC («Էլեկտրոնային առևտրի մասին») Դիրեկտիվ:

⁴ Տե՛ս <http://hudoc.echr.coe.int/sites/eng/pages/search.aspx?i=001-126635#%22itemid%22:%22001-126635%22>]: Գործի նախապատմությունը հետևյալն է. էստոնական Ղելֆի լրատվական գործակալության դեմ հայց էր ներկայացվել իր ֆորումում գտնվող զրպարտչական և վիրավորական մեկնաբանությունների համար, ընդ որում՝ կրկին առանց նախապես դիմելու լրատվամիջոցին:

նությունների հեղինակների դեմ հայտ ներկայացնելու չափանիշը (ինչպես առաջարկում է դիմողը) այս գործում կապահովի տուժողի անձնական կյանքի պաշտպանությունը: Ինչպես նշվել է, դիմող ընկերությունը ընտրությունը թողնել էր ոչ գրանցված օգտատերերի մեկնաբանությունները, և այդպիսի վարքագծով ենթադրվում է, որ այն իր վրա վերցրել է որոշակի պատասխանատվություն մեկնաբանությունների համար»: Ակնհայտ է, որ Եվրոպական դատարանի կողմից սահմանված չափանիշները շատ ավելի խիստ են, քան աշխարհում լայնորեն տարածված «ծանուցել և հանել» սկզբունքը, քանի որ ակնհայտ է, որ այստեղ խոսքը միայն այն մասին է, որ գործակալությունը պարտավոր էր ակտիվ հսկողություն իրականացնել իր ֆորումում առկա բոլոր մեկնաբանությունների համար: Հարկ է նշել, որ այս գործը շատ խիստ քննադատության է արժանեցել բազմաթիվ երկրներում, միջազգային մի շարք հեղինակավոր կազմակերպությունների կողմից և բողոքարկվել է ՄԻԵԴ Մեծ պալատ¹:

Ամենասուր քննադատություններից մեկը հնչել է «Article 19» կազմակերպության կողմից, որը հանդես է եկել ոչ միայն այս գործի, որը շատ ավելի խիստ պատասխանատվություն է սահմանում, այլև առհասարակ «ծանուցել և հանել» սկզբունքի քննադատությամբ: Մասնավորապես շեշտը դրվում է այն բանի վրա, որ վիճահարույց նյութը ի սկզբանե տեղադրած անձը (տվյալ դեպքում՝ մեկնաբանություն թողնող անձը), որպես կանոն, չի տեղեկացվում բողոքի մասին, կամ նրան հնարավորություն չի տրվում պատասխանելու: Միջնորդները (լրատվական կայքերը) հաճախ ելնում են այն կանխավարկածից, որ նյութը անօրինական է, և հանում են այն՝ չնայած այն փաստին, որ դա կարող է օրինական լինել: Սա առավել խնդրահարույց է, քանի որ միջնորդները չունեն մրցակցող շահերը հավասարակշռելու պահանջված անկախություն: Նրանք նաև հաճախ չեն ներկայացնում հեռացնելու վերաբերյալ իրենց որոշման պատճառները: Ի վերջո այն անձինք, որոնց նյութը հեռացվել է, դա վիճարկելու կա՛մ շատ քիչ հնարավորություն ունեն, կա՛մ ընդհանրապես զրկված են դրանից:

«Article 19»-ը հանդես էլ գալիս «notice-and-take down»-ը «notice-to-notice» ընթացակարգով փոխարնելու գաղափարի պաշտպանությամբ: Սրա էությունը այն է, որ միջնորդը կապող օղակ է ընդամենը, այսինքն՝ այն անձը, ով բողոքում է մեկնաբանության բովանդակության դեմ, պետք է առաջին հերթին ծանուցի մեկնաբանության հեղինակին, և միայն այն դեպքում, երբ վերջինս չի արձագանքի կամ կմերժի հեռացնել պահանջը, կարող է ներկայացվել միջնորդին: Այս մոդելը, ըստ այդ կազմակերպության, նախ թույլ է տալիս լսել բովանդակության հեղինակին և միջնորդին, փաստորեն թույլ չի տալիս իրականացնել գրաքննություն:

Այսպիսով՝ ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք եզրակացնել, որ արդի փուլում իսկապես չափազանց կարևոր նշանակություն ունի այս հարցերը օրենսդրորեն կարգավորելը, որովհետև դատական պրակտիկան կարող է զարգանալ տարբեր ուղղություններով, սակայն կարևոր է, որ օրենսդիրը նախանշի զարգացման ուղին:

Թվում է՝ այս ժամակահատվածում Հայաստանի Հանրապետությունում առավել հեշտ իրացվելի է «ծանուցել և հանել» սկզբունքը: Մասնավորապես, այսպես թե այնպես, լրատվական կայքերը իրականացնում են մոդերացիա, և վիրավորական բազմաթիվ մեկնաբանություններ կայքում չեն հայտնվում: Այդպիսի համակարգ ունեն գրեթե

¹ Ամենայն հավանականությամբ վերջնական որոշումը կիրապարակվի սույն թվականի գարնանը:

բոլոր լրատվամիջոցները: Բացի այդ՝ կարծում ենք՝ նախ և առաջ պետք է գործարկել «ծանուցել և հանել» մոդելը, դրա կիրառման ընթացքում վեր հանել գործնականում առաջացած խնդիրները, նաև կարողանալ ստեղծել ընթերցողին ծանուցելու պատշաճ համակարգ, այդուհետ միայն քննարկել «ծանուցել և ծանուցել» մոդելին անցնելու հնարավորության հարցը:

Այսպիսով, առաջարկում ենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-ին հոդվածը լրացնել հետևյալ դրույթներով. «Զրպարտության կամ վիրավորանքի դեպքում անձը կարող է հրապարակային էլեկտրոնային կայքի իրավատիրոջից պահանջել հեռացնել իրավատիրոջ կայքում տեղ գտած զրպարտություն կամ վիրավորանք պարունակող մեկնաբանությունը: Իրավատերը պարտավոր է վիրավորանք կամ զրպարտություն պարունակող մեկնաբանությունը հեռացնել պահանջը ներկայացնելուց հետո՝ անհապաղ, բայց ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում:

Լրատվական գործունեություն իրականացնողը պատասխանատվություն է կրում էլեկտրոնային կայքում տեղ գտած վիրավորանք կամ զրպարտություն պարունակող մեկնաբանությունների համար, եթե այդպիսի մեկնաբանությունը հեռացնելու վերաբերյալ պահանջ ներկայացնելուց հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում, չի հեռացնում մեկնաբանությունը կամ հրաժարվում է հեռացնել այն:

Հրապարակային էլեկտրոնային կայքի իրավատիրոջ կողմից վիրավորանք կամ զրպարտություն պարունակող մեկնաբանությունը հեռացնելու վերաբերյալ պահանջը չկատարելու դեպքում տուժողը իրավունք ունի դատական կարգով հրապարակային էլեկտրոնային կայքի իրավատիրոջից պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝ հրապարակային ներողություն խնդրել, հեռացնել վիրավորանք կամ զրպարտություն պարունակող մեկնաբանությունը և վճարել վիրավորանքի կամ զրպարտության՝ սույն հոդվածով նախատեսված չափի փոխհատուցում՝ անկախ մեկնաբանության հեղինակին պահանջ ներկայացնելու հանգամանքից»:

ОТВЕТСТВЕННОСТЬ ОНЛАЙН СМИ ЗА КОММЕНТАРИИ ПОЛЬЗОВАТЕЛЕЙ

Арпине Оганнесян

*доцент кафедры гражданского права ЕГУ,
кандидат юридических наук,*

В статье проанализированы проблемы ответственности онлайн СМИ за комментарии пользователей. В настоящее время в РА отсутствует законодательное регулирование за оскорбительные или клеветнические комментарии, которые пользователи оставляют на сайтах интернет СМИ. В статье были представлены различные модели ответственности за комментарии пользователей, которые широко применяются в различных странах. Также были исследованы проблемы, возникшие в РА в этой сфере. В качестве решения, в статье предлагается внедрить в наше законодательство широко распространенный принцип предупреждения и удаления («notice and takedown»), при котором интернет СМИ освобождаются от ответственности, если в установленном сроке удаляют оскорбительные или клеветнические комментарии.

THE LIABILITY FOR ONLINE MEDIA USERS' COMMENTS

Arpine Hovhannisyan

Candidate of Legal Sciences, Associate Professor

The present article analyzes the issue of liability of the online media for the users' comments. Currently, in Armenia there is no legal regulation for those abusive or defamatory comments that people leave in the websites of the internet media. For a complete picture of the topic in the article various models of responsibility for users' comments were presented, which are widely used in various countries. We're also investigating problems arising in the RA in this area. As a solution, the article proposes to constitute a widespread principle of «notice and takedown» by the RA legislation under which Internet media are exempt from liability if it deletes offensive or defamatory comments in a timely manner.

Բանալի բառեր՝ պատասխանատվություն, առցանց լրատվական միջոց, վիրավորանք, գրպարտություն, օգտատեր, ծանուցել և հանել:

Ключевые слова: ответственность, онлайн СМИ, оскорбление, клевета, комментарии, пользователь, предупреждение и удаление.

Key words: liability, online media, abuse, defamation, comments, user, «notice and takedown».